

ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԲԱՆ, ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏ ԵՎ
ՀԱՅԱԳԵՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԸ
(Ծննդյան 140-ամյակի առթիվ)

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Այս տարի լրանում է մեծանուն գիտնականի ծննդյան 140-ամյակը և առիթ է խոսելու նրա կյանքի հետաքրքիր ընթացքի ու գիտական նվաճումների մասին: Ն. Ադոնցը թողել է գիտական այնպիսի ժառանգություն, որը մշտապես մնալու է հայ պատմագիտության, հայագիտության գանձարանում, որպես «առաջին մերոյ գանձուն համարելով»¹: Ն. Ադոնցի կենսագրության վերաբերյալ կան հոդվածներ և ուսումնասիրություններ: 1946 թ. Փարիզում ֆրանսերենով լույս է տեսել Նրա «Հայոց պատմությունը» «Histoire d'Arménie, Les origines du X siècle au VI (Av. J. C.)» [*Քննական պատմություն Հայոց, հ. I, Հայաստանի պատմություն: Ակունքները (X-VI դարեր Բ.ա.)*]: Այս գրքի ֆրանսերեն առաջաբանում դրված է Ն. Ադոնցի կենսագրությունը, նրա գրական ժառանգության հիմնական ցանկը, որի մեջ նշված են ռուսերենով, հայերենով ու ֆրանսերենով հրատարակությունները²:

Ն. Ադոնցը ծնվել է պատմական Սյունիքի Բոնակոթ գյուղում 1871-ի հունվարի 10-ին³: Ավարտել է Տաթևի վանքի դպրոցը, միջնակարգ կրթություն է ստացել Գևորգյան ճեմարանում, մի ուսումնական հաստատություն, որը կարևոր դեր է խաղացել Կովկասի հայության մշակութային կյանքում: Ադոնցը չի ավարտել ճեմարանի լրիվ դասընթացը. 1891-ին տեղափոխվել է Թիֆլիս և մեկ տարի անց ընդունվել տեղի ռուսական գիմնազիան, որն ավարտել է յուրացնելով անտիկ դասական լեզուները՝

¹ Այսպես է ասում Մովսես Խորենացին Մար Աբաս Կատինայի մատյանի մասին (տե՛ս Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարությանեանի, Երևան, 1991, էջ 31): Ն. Ադոնցը մեզանում ստացել է իր արժանի գնահատականը: Բավական է հիշել, որ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունն արդեն տպագրել է նրա հինգհատորյակի չորս հատորները, որոնք մեծ հիմնությամբ ու նվիրումով հրատարակության է պատրաստել արոնցագետ, պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը, իսկ բյուզանդագիտությանն ու հայագիտությանը մեծ նպաստ բերող ձեռնարկն իրականացվել է «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հովանավորությամբ:

² N. Adontz. Histoire d'Arménie, Les origines du X siècle au VI (Av. J.C.), p. IX–XV.

³ Ն. Ադոնցի մասին կենսագրական փաստեր են հաղորդում Մ. Բշիսանը (տե՛ս Ն. Ադոնց. Երկեր, հ. Դ, էջ 13), Ա. Չոպանյանը (տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1949, թիվ 1, էջ 32-34), Պ. Հովհաննիսյանը (տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 17-18) և շատ ուրիշներ: Ն. Ադոնցի «Հայոց պատմության» I հատորի ֆրանսերեն նախաբանում գիտնականի ծննդյան թվականը նշվում է հետևյալ ձևով. «Պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը ծնվել է 1875-ի հունվարի 23-ին Ջանգեզուրի գավառի Բոնակոթ գյուղում (Անդրկովկասի Հայաստան), (ընդգծումը մերն է – Ա. Դ.), («Le Professeur Nicolas Adontz est né le 23 janvier 1875 dans la village de Bernagoth du district de Zanguezour (Arménie transcaucasienne)» p. IX.

հունարեն ու լատիներեն: Գիտնականն իր «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» հոդվածում, որը գրվել է 1937-ին Բրյուսելում և առաջին անգամ տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրում՝ նույն թվականին, հաղորդում է իր Ադոնց ազգանվան հետ կապված հետաքրքիր մի փաստ: Նա հավաստում է, որ իր նախապապը եղել է Դավիթ Բեկի զինակիցներից Տեր Ավետիք քահանան, որի քաջության շնորհիվ առնվեց Ջուրերդը՝ Դավիթ Բեկի ամենանշանավոր հաղթանակը: «Ադոնց տան պաշտոնական ազգանունն է Տեր-Ավետիքյան: Այդպես էի կոչվում նաև ես Ս. Էջմիածնի ճեմարանում աշակերտելիս: Երբ հետո ռուսական զիննագիտն մտա՝ Թիֆլիսի Երկրորդ զիննագիտնը, դպրոցի դիվանը, ռուսական սովորությամբ, փոխեց անունս՝ Տեր-Ավետիքով: Տեսուչը չէի մարդ էր՝ Դրբոզլավ, հեռու ռուսամոլությունից: Վստահելով նրա բարյացակամ վերաբերումին՝ նկատեցի, որ անունս աղավաղել են և չեն ուզում ուղղել: Շատ սառը պատասխանեց, որ տրտունջի տեղը չէ և պետք է հնազանդվել դպրոցական կարգերին: Գիննագիտն ավարտելիս չուզեցի բնավ, որ վկայականի մեջ Ավետիքով գրեն, որով ընդմիջտ պաշտոնական ձև պիտի առնեք և համալսարանում և հետո, ուստի գրեցի Երևան կոնսիստորիա և ստացա վկայաթուղթ, թե Տեր-Ավետիքյան է նույն Ադոնց: Ավարտական քննությունների ժամանակ ես արդեն Ադոնց էի և ոչ Ավետիքով»⁴: Նա բացատրում է նաև, որ Ադոնց տունը Բոնակոթում բնիկ չէ, այլ եկվոր. զանազան փաստերով հիմնավորում է, որ Ադոնց տունն ունի իշխանական ծագում:

1895-ին Ադոնցը մեկնում է Ս. Պետերբուրգ, ուր դառնում է Ն. Մառի աշակերտը և սովորում պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության և արևելյան լեզուների բաժիններում: Պետերբուրգի համալսարանում խորացրել է իր լեզվական գիտելիքները, սովորել հին ու նոր լեզուներ՝ սանսկրիտ, պարսկերեն, վրացերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն: 1899-ին ավարտում է համալսարանն ու նույն տարին մասնակցում գիտական մրցույթին, որին ներկայացնում է «Le Synaxaire et les Récueils hagiographique arméniens» աշխատությունը և ստանում ոսկե մեդալ⁵: Պետերբուրգի համալսարանը մեծ հույսեր է կապում Ադոնցի հետ ու նրան դասախոսական աշխատանքի նախապատրաստելու համար ուղարկում է Բավարիայի մայրաքաղաք Մյունխեն: Տեղի համալսարանում նա հետևում է արևելագիտության և բյուզանդագիտության դասընթացներին ու եռանդուն պարապում քաղաքի տարբեր գրադարաններում: Մյունխենից անցնում է Փարիզ, հետո Լոնդոն և Վենետիկ: Երկու տարի հետո գիտելիքների մեծ պաշարով վերադառնում է Ս. Պետերբուրգ ու լիովին նվիրվում գիտահետազոտական աշխատանքին: 1903–1904 թթ. մեկնում է Կովկաս՝ մասնապես Թիֆլիս ու Էջմիածին՝ երկար աշխատելով Էջմիածնի հարուստ ձեռագրատանը: 1908-ին ռուսերենով Ս. Պետերբուրգում լույս է տեսնում Ն. Ադոնցի առաջին սովորածավալ կոթողային աշխատությունը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»: Այս գիրքը 1969-ին թարգմանվել է անգլերեն, իսկ 1987-ին՝ հայերեն: Պետերբուրգի համալսարանի

⁴ Ն. Ադոնց. Երկեր, հ. Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2006, էջ 552 (այս և հետագա մեջբերումներում ընդգծումները մերն են):

⁵ N. A d o n t z. Histoire d'Arménie, p. IX.

խատապահանջ ժյուրին հիացմունքով գիտնականին շնորհում է մագիստրոսի աստիճան ու իրավունք տալիս աշխատելու համալսարանում՝ որպես պրիվատ-դոցենտ: Ադոնցի կոթողային երկրորդ գործը դարձավ «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» աշխատությունը, որի համար նա ստացավ բանասիրության դոկտորի աստիճան և կոչվեց «professeur extraordinaire». «Дионисий Фракийский и армянские толкователи» երկը լույս է տեսել 1915-ին Ս. Պետերբուրգում, 1970-ին այն հրատարակվել է Լուվենում՝ ֆրանսերենով⁶, այժմ կա նաև հայերեն թարգմանությունը⁷:

Ն. Ադոնցը 1903–1904-ին խմբագրում է Ս. Պետերբուրգում լույս տեսնող «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսը, որին աշխատակցում էին թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ առաջնակարգ հեղինակները: Միաժամանակ թղթակցել է Թիֆլիսի «Նոր դար» օրաթերթին: Ն. Ադոնցն ունեցել է հասարակական եռանդուն գործունեություն. հայ եկեղեցու բարեգործական միության անդամ էր, իսկ իշխան Աբամելիք Լազարևի մահից հետո, որը Սոսկվայի Լազարյան ճեմարանի հոգաբարձուն էր, փոխարինում է վերջինիս: 1916–1917 թթ. ղեկավարում է ռուսական կայսրության հնագիտական միության գիտարշավները դեպի Վան, Սուշ, Էրզրում: Այդ տարածքները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գրավվել էին ռուսական զորքի կողմից: 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նա մնում է Լենինգրադում մինչև 1920 թ. ու շարունակում դասախոսական աշխատանքը համալսարանում: 1920 թ. թողնում է Ռուսաստանը, անցնում Ֆինլանդիա, այնտեղից էլ՝ Լոնդոն: Մեկ տարի մնում է Լոնդոնում և համագործակցում անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիքերի հետ⁸: Այնուհետև տեղափոխվում է Փարիզ, ուր մնում է մինչև 1930 թ.: Այստեղ Ադոնցը ֆրանսերենով հրատարակում է մի շարք կարևոր աշխատություններ, միաժամանակ աշխատակցում Բոստոնի «Հայրենիք», Երուսաղեմի «Միս», Վիեննայի «Հանդես Ամսօրյա», Վենետիկի «Բազմավեպ», Փարիզի «Անահիտ» և «Վեմ» հանդեսներին ու «Յառաջ» օրաթերթին: Փարիզում հիմնում է «Cercle litterature arménien» («Հայ գրականության շրջանակ») խումբը և դառնում Մելքոնյան հրատարակչական ֆոնդի անդամ: 1930-ին Բրյուսելի համալսարանի բյուզանդագիտության ամբիոնի վարիչ Հանրի Գրեգուարի կողմից հրավիրվում է Բրյուսելի համալսարանի նորաբաց հայագիտական ամբիոնը ղեկավարելու: Այստեղ նա դասավանդում է բյուզանդագիտություն, հայոց լեզու և հայ գրականություն: Ադոնցը Բրյուսելում էլ մեծ եռանդով շարունակում է իր գիտահետազոտական աշխատանքները՝ հանդես գալով «Byzantion» և «L'Annuaire de l'Institut Oriental» պարբերականներում: Ն. Ադոնցը վախճանվել է 1942-ի հունվարի 27-ին Բրյուսելում: Ա. Չոպանյանը նրա մահ-

⁶ N. Adontz. Deny de Thrace et les commentateurs arméniens, traduit du russe, par René Hotterbeex. Louvaine, 1970.

⁷ Ն. Ադոնց. Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները.– Ն. Ադոնց. Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ XIII–CLXXIII, 1–307:

⁸ Քերովբե Պատկանյանի և Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակները.– «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1966, -3, էջ 98:

վան պատճառը համարում է Բրյուսելի խոնավ եղանակից առաջացած ծյուրախտը, որը կարելի էր բուժել, եթե մեծ գիտնականին տեղափոխեին Միջերկրականի արևոտ ափերը⁹: Ադոնցի մահվանից հետո Մելքոնյան հրատարակչական ֆոնդի արտասահմանյան հանձնախմբի ձեռնարկով իր վաղեմի բարեկամ Զավրիկը մեկնել է Բրյուսել՝ մեծ գիտնականի թողած ձեռագրերը Մելքոնյան ֆոնդի հանձնախմբին բերելու և հնարավորինս դրանք հրատարակելու համար:

Մելքոնյան ֆոնդը առաջինը հրատարակում է Ն. Ադոնցի «Հայոց պատմության» առաջին հատորը, որի առաջաբանը Ա. Չոպանյանի խնդրանքով գրում է ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն:

Չափազանց դժվար է մի հողվածի սահմաններում առավել հանգամանալի ներկայացնել Ն.Ադոնցի գիտական ողջ ժառանգության բերած նորությունները. դրա համար անհրաժեշտ է ստվարաձավալ առանձին հետազոտություն՝ գրաբարի, ֆրանսերենի, ռուսերենի, անգլերենի, հին հունարենի և այլ լեզուների քաջիմացության պարագաներում:

Մեր ժամանակների անվանի բյուզանդագետ Հ. Բարթիկյանը դիպուկ ձևով բնութագրել է Ն. Ադոնցի կատարած գիտական նորարարությունը. «Հայագիտություն - բյուզանդագիտություն՝ փոխադարձ առնչությունների ուսումնասիրությունը հաստատուն գիտական հիմքի վրա դրեց մեծանուն Ն. Ադոնցը: Կարելի է ասել, որ նրա բոլոր հետազոտությունները, լինեն նրա երկու մենագրությունները՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» և «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները», հայերեն և ֆրանսերեն լեզուներով նրա բազմաթիվ հողվածները, վերաբերում են հայագիտության և բյուզանդագիտության փոխադարձ առնչություններին: Հիմնահարցով զբաղված և զբաղվող բոլոր մասնագետների ելակետը հենց Ն.Ադոնցի ուսումնասիրություններն են, որոնք իրենց ստեղծումից մեկ դար էլ անց չեն կորցրել իրենց թարմությունն ու գիտական արժեքը»¹⁰:

Ն. Ադոնցի կոթողային վերջին աշխատությունը նրա «Հայոց պատմության» առաջին հատորն է, որը լույս է տեսել գիտնականի մահվանից չորս տարի անց: Այս աշխատության իրական արժեքը գնահատել է Ռընե Գրուսեն գրքի իր առաջաբանում: Նա ասում է, որ ըստ Ադոնցի՝ Նաիրյան ցեղերի մեջ դեռևս IX դարում Քրիստոսի ծննդից առաջ ուժեղ ձգտում առաջացավ միավորվելու, և նրանք ստեղծեցին Ուրարտու պետությունը: Ադոնցն Ուրարտուն համարում է հայ պետականության նախնական ժամանակահատվածը. «... Ուրարտուի առաջին թագավորը, որի անունը հասել է մեզ, հենց այն Արամեն է, որը դարերի անջրպետի և ցեղերի միջով կարողացել է դառնալ հայ ազգի հերոսական էպոնիմը»¹¹: Գրուսեն նշում

⁹ «Անահիտ» (Փարիզ), 1949, թիվ 1, էջ 34:

¹⁰ Հ. Մ. Բարթիկյան. Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. 3, Երևան, 2006, էջ 234:

¹¹ N. A d o n t z. Histoire d'Arménie, p. V («...le premier souverain de l'Ourartou dont le nom soit parvenu jusqu' à nous est ce même Aramé qui, par delà les siècles et les races, peut, bien être devenu le heros éponyme de la nation arménienne» (տե՛ս նաև Ն. Ադոնց. Երկեր, հ. 3, հատորը հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2009, էջ 27).

է, որ Ադոնցը նախապատմական և հնագույն ժամանակների հայոց պատմությունը - շարադրել է գիտականորեն՝ հաշվի առնելով ուրարտագիտության, ասորագիտության ու իրանագիտության վերջին հայտնագործությունները. «Այստեղ մենք հպվում ենք Ադոնցի աշխատության ամենահետաքրքրական մասերից մեկին, որտեղ նա, սեպագիր բնագրերը ձեռքին, մեզ ցույց է տալիս, որ հայկական դասական քաղաքակրթությունը - գալիս է ուրարտականից և ամբողջապես սուզվում է այդ քաղաքակրթության մեջ»¹²: Գրուսեն նշում է, թե Ադոնցն ինչպես կարողացավ ճշգրիտ ու անկողմնակալ հողվածներով ցույց տալ Հայաստանի ու հայերի կատարած դերը Բյուզանդական հզոր կայսրության ծաղկման գործում՝ սկսած «մակեդոնական մեծ հարստությունից, որը ծերացած պետության առջև բացեց X դարի զարմանալի վերածննդի դռները: Ադոնցը մեզ ցույց է տալիս նաև, թե Բյուզանդիան որքան վատ վարձատրեց Հայաստանին՝ նրա ավանդի դիմաց»¹³:

Գրուսեն հավաստում է նաև Ադոնցի այն կարևոր նկատումը, որը վերաբերում է Տիգրան Մեծին, որն օգտվելով հելլենիստական անիշխանությունից, հին Հայաստանը հասցրեց իր տարածքային ընդարձակման գագաթնակետին: Նա ապացուցում է, որ լուսավորյալ և իմաստուն գահակալը մոռացված է պատմության կողմից, մինչդեռ նա եղել է իր ժամանակի Արևելքի ամենանշանավոր ու մեծագործ գահակալը. «... Նա շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «-ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»¹⁴: Ռ. Գրուսեն Ն. Ադոնցի «Հայոց պատմության» առաջին հատորը համարում է գիտնականի մահվան ժամին իր ժողովրդին ընծայած արքայական պարզև:

Ընդհանրապես Ն. Ադոնցի գիտական մոտեցումները կարելի է բաժանել երկու ժամանակահատվածների միջև: Առաջինը կապվում է Ս. Պետերբուրգում սովորելու և աշխատելու տարիների հետ, իսկ երկրորդն՝ սկսվում է 1920-ից՝ մինչև իր կյանքի վերջը: Երկրորդ շրջանում նա առավել մեծ վստահություն է ընծայում հայ միջնադարյան աղբյուրներին և ինչ-որ չափով դժգոհ է եվրոպական հայագիտությունից: Այդ մասին վկայակոչումներ կան նաև նրա նամակներում: 1927-ին Փարիզից Գ. Հովսեփյանին ուղղված նամակում Ադոնցը գրում է. «Հայագիտությունը ևս ճգնաժամի մեջ է: Բոլոր կենտրոնները տկարացած: Եթե տարին երկու խոշոր հատոր

¹² Նույն տեղում, էջ 28: «...que la civilisation arménienne classique remonte à la civilisation ourartienne, plonge à plein dans cette civilisation» (N. Adontz. Histoire de l'Arménie, p. VI).

¹³ «...nous montrer tout ce que Byzance doit à l'Arménie, à commencer par la grande dynastie «macédonienne» qui a valu vieil empire l'étonnante renaissance du X-ème siècle Adontz nous a rappelé aussi combien Byzance a mal récompensé l'Arménie de son apport» (նույն տեղում, էջ VII).

¹⁴ «... sans doute bien plus que son contemporain Mithridate Eupator l'admiration de l'histoire, si l'on veut bien observer que Mithridate a brillamment „suicidé son empire”, tandis que Tigran a assuré la survie de son peuple pour l'éternité» (նույն տեղում, էջ VII).

հաջողեցնել կարենանք, մեծ բան է»¹⁵: Նույն նամակում գիտնականը խոր ցավով գրում է, որ գրադարանը մնացել է Պետերբուրգում և թվում է, թե անհետացել է, որովհետև ինքը ոչ մի գիրք չի կարողանում ստանալ, իսկ Փարիզում «հայագիտական գրքերի սով - է»: Նա խնդրում է, որ Գ. Հովսեփյանը Էջմիածնի վանքում գտնի հայ պատմիչների գրքերը՝ Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Ղազար Փարպեցի, Մեբեոս, Ասողիկ, Ղևոնդ վարդապետ: 1928 թ. Գ. Հովսեփյանին գրած մեկ ուրիշ նամակում Ադոնցը խոսում է հայրենադարձության ու կարոտի մասին. որքան էլ Հայաստանում ծանր է ժողովրդի վիճակը, բայց հայը ապրում է իր հայրենիքում, իսկ հայրենիքից դուրս հաճում են հայերի մեծ բազմություններ. «Հերոսական միջոցներ են հարկավոր նրանց փրկելու վերահաս ձուլումից ու փշանալուց...»¹⁶:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գիրքն ունի ենթախորագիր՝ «Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի»: Մասնագետները նկատել են արդեն, որ չնայած Ադոնցի գրքի խորագիրը նշում է բյուզանդական կայսր Հուստինիանոսի դարաշրջանը, սակայն այս եզակի ուսումնասիրությունն իր մեջ ընդգրկում է Հայաստանի վերաբերյալ տվյալներ՝ հնագույն ժամանակներից մինչև XV-II դարը: Հուստինիանոսը բյուզանդական կայսր է եղել 527-565 թթ.: Նրա գահակալության ժամանակ հաղթական ճակատամարտերի շնորհիվ ընդարձակվում են բյուզանդական կայսրության սահմանները՝ իրենց մեջ առնելով ողջ Իտալիան, Իսպանիայի մի մասը, Աֆրիկայի ողջ հյուսիսային հատվածը, Արևելքում նաև Արևմտյան Հայաստանը: Հուստինիանոսը հայտնի էր որպես շինարար կայսր, նրա իշխանության ժամանակ են կառուցվել բյուզանդական կայսրության փառքը հաստատող բազմաթիվ աշխարհիկ ու հոգևոր շինություններ, որոնցից մեկն է Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարը: Հուստինիանոսի մեծագույն գործը դարձավ նրա օրենսդրությունը, որը ցարդ ընկած է եվրոպական քաղաքացիական օրենսդրության հիմքում¹⁷:

Հուստինիանոսի օրենսդրությունն ուներ Հայաստանին վերաբերող հատուկ բաժին՝ ըստ որի բյուզանդական կայսրության մեջ մտնող Արևմտյան Հայաստանը հասարակական բոլոր խավերով պետք է ենթարկվեր այս օրենսդրությանը: «Հայաստանի քաղաքացիական վերակազմությունը» բաժնում Ադոնցը հին հունարենից թարգմանաբար մեջբերում է հատվածներ Հայաստանին վերաբերող մասից: Դրանցից մեկում հատուկ պաշտպանվում են կանանց ժառանգական իրավունքները. «Նկատի ունենալով այդ՝ մենք այս սրբազան օրենքի ուժով հրամայում ենք, որպեսզի հայերի մեջ ևս կիրառվի այն, ինչ որ կանանց ժառանգական իրավունքի վերաբերյալ ընդունված է մեզ մոտ՝ առանց խտրություն դնելու արական և իգական սեռերի միջև: Այդ հարցը ինչպես որ դրված է մեր օրենսդրության մեջ, և ինչ ձևով որ ծնողներին ժառանգում են վերընթաց գծով, այսինքն՝ հորը կամ մորը և կամ պապին ու տատին, նույնը և վարընթաց

¹⁵ Քերտվրե Պատկանյանի և Նիկողայոս Ադոնցի անտիպ նամակները, էջ 114:

¹⁶ Նույն տեղում, էջ 117:

¹⁷ Le petit Robert – 2, Dictionnaire universel des noms propres. Paris, 1988, p. 957.

գծով, այսինքն՝ որդուն կամ աղջկան, ինչպես որ այստեղ կատարվում է ժառանգումը, այդպես էլ պիտի լինի հայերի մոտ: Հայաստանում իրավական նորմերը ոչ մի բանով չպետք է տարբերվեն հռոմեականից: Քանի որ հայերը մեր պետության մեջ են մտնում, մյուս ժողովուրդների նման ենթարկվում են մեզ և ճաշակում մեր բարիքները, ապա և նրանց կանայք չպիտի զրկվեն մեզ մոտ գոյություն ունեցող իրավահավասարությունից»¹⁸:

Ն. Ադոնցը ներկայացնում է, թե ինչպես Հայաստանը, դառնալով լայնածավալ բյուզանդական կայսրության մի մասը, իր վրա կրում է բյուզանդական մշակույթի ազդեցությունը: Միաժամանակ այդ հզոր կայսրության ծայրամասային երկիրը մեծ նպաստ է բերում տերության մտավոր կյանքին: Ներգրավելով բյուզանդական քաղաքական միավորման մեջ՝ Հայաստանը և նրա ժողովուրդը ուժ են գտնում պահպանելու սեփականն ու ազգայինը՝ լեզուն, մատենագրությունը, կրոնական սովորությունները, - լավագույն ավանդները:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրությունը պատմաբան Գ. Սարգսյանը համարում է Ն. Ադոնցի գլուխգործոցը. «... հանձին Ն. Ադոնցի հայ պատմագիտության մեջ գործել է մի հեղինակ, որը առաջինն է ամփոփել հայ ժողովրդի սոցիալական պատմության հիմնական երևույթները սկզբից մինչև վաղ միջնադարը ներառյալ: Եվ Ադոնցն այդ կատարել է ոչ միայն տալով նյութի պատմաբանասիրական և պատմաաշխարհագրական վերլուծության օրինակելի նմուշներ, այլև միավորելով XIX դարի դասական հայագիտության և եվրոպական քննական պատմագիտական մտքի նվաճումները: Այս ամենը Ն. Ադոնցի երկը դարձրել են հայագիտության մեջ տակավին չգերազանցված մի արժեք»¹⁹:

1904-ին Պետերբուրգում լույս է տեսնում «Մարգպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ» ոչ ծավալուն հոդվածը, որը ցարդ համակիրների իր բանակն ունի թե՛ պատմաբանների և թե՛ գրականագետների մեջ: Հոդվածում, հենվելով հինգերորդ դարի հայ պատմիչների ընձեռած փաստերի վրա, Ադոնցը փորձում է արդարացնել մարգպան Վասակ Սյունեցու քաղաքական վարքագիծը Ավարայրի հերոսամարտի հետ կապված իրադարձություններում ու նրա վրայից վերցնել դավաճանի խարանը: Նրա կարծիքով Ավարայրի հերոսամարտի դեպքերը նկարագրող երկու պատմիչները՝ Եղիշեն ու Ղազար Փարպեցին, իրենց երկերը գրել են մեկենաս ունենալով Մամիկոնյաններին ու իրենց հովանավորների հայացքով էլ ներկայացրել են պատմական իրադարձությունները: Ադոնցը բացատրում է, թե Վասակը սկզբում ըմբոստության կողմ էր, միայն համոզված էր, որ հայերը կարիք ունեին արտաքին ուժերի օգնության ու համապատասխան նամակներով դիմում է Թեոդոսիոս կայսրը, Անտիոքի ստրատեգոս Անատոլիոսին, կոչեր է հղում Իբերիա և Աղվանք, բանակցում անգամ հոների թագավոր Հեռանի և այլ լեռնականների հետ: Մուրհանդակներ է ուղարկում Բյուզանդիայի հովանավորության տակ

¹⁸ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 209:

¹⁹ Նույն տեղում, էջ 564:

գտնվող ինքնավար հայկական նահանգները՝ Ադձնիք, Անգեղտուն և Ծովք, սակայն ոչ մի պատասխան կամ օգնություն չի ստանում: Բացի այդ, սրբազան ուխտին՝ Արտաշատի ժողովին մասնակցող 18 իշխաններից հավատարիմ են մնում 8 նախարար, իսկ 10-ը անցնում են Վասակի կողմը: Գիտնականը հիշեցնում է նաև այն հիացական գնահատականը, որ Մաշտոցի կենսագիր Կորյունը տվել է Վասակին, որը Մաշտոցին մեծապես նպաստեց նրա լուսավորչական գործունեության մեջ. «Յորում ժամանակի պարգևեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Միւնեաց քաջն Միսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր»²⁰: Գիտնականը հիշեցնում է, որ Եղիշեն իր մատյանը գրել է, որ հետագա սերունդները նզովք կարդան Վասակի անվանը և շեշտել է, թե Վասակն ուզում էր թագավոր դառնալ Հայաստանի վրա, մինչդեռ նրա գերեզմանի տեղն էլ չգտնվեց ու մեռավ չարաչար մահով²¹:

Ադոնցի կարծիքով՝ Վասակի գործունեությունն առավել անկողմնակալ է ներկայացված Ղազար Փարպեցու կողմից, որը պատմում է, թե Վասակի փեսա Վարազ-Վաղանը փախել է Պարսկաստան, ընդունել զրադաշտական կրոնը ու պարսից արքունիքը գրգռել հայերի և Վասակի դեմ ու Վասակի Պարսկաստանում բանտարկվելուց հետո, Վարազ-Վաղանը պարսիկների կողմից ստանում է Սյունիքի նախարարական իշխանությունը: Նկատենք, որ Ադոնցը երբեք չի նսեմացնում Վարդան Մամիկոնյանին՝ որպես ազգային հերոս ու սրբություն. նա ընդամենը փորձում է բացատրել Վասակ Սյունեցու քաղաքական այլ ծրագրից բխած քայլերը, որոնք կործանեցին հենց նրան: Ն. Ադոնցի այս դիրքորոշումը կիսում է անվանի պատմաբան, հնագետ Մորուս Հասրաթյանը, որը նույնպես արդարացնում է Վասակին՝ չնսեմացնելով Վարդան Մամիկոնյանին. «Վարդան Մամիկոնյանը ժողովրդի աչքում իրավամբ համարվում էր սուրբ նահատակ: Ամենայն հավանականությամբ, 480–490-ական թթ. Վարդան Մամիկոնյանին, նրա զոհվելուց 30–40 տարի անց, պաշտոնապես դասեցին սրբերի շարքը, թեև նա հոգևոր դասին չէր պատկանում, որից հետո արդեն կոչեցին սուրբ Վարդան»²²:

Ն. Ադոնցի գիտական հետաքրքրությունների շառավիղը շատ ընդարձակ է՝ հայ-բյուզանդական առնչություններ, հայոց հին դիցաբանություն, հայ պատմիչներ՝ Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ, Կորյուն, Ագաթանգեղոս, Մովսես Կաղանկատվացի, Ղևոնդ և այլք, հայ միջնադարյան մատենագիրներ, հայ նոր գրականություն՝ Խ. Աբովյան, Մ. Պեշիկյաշյան, Եվրոպացի հայագետներ, հայ միջնադարյան մանրանկարչություն, XX դարասկզբի ավանգարդային մշակութային ուղղություններ,

²⁰ Կորյուն. Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 64:

²¹ Եղիշեն. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 282:

²² Մ. Հասրաթյան. Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 70:

միջնադարի հայ քերականներ, հայ առաքելական եկեղեցու պատմություն, Մաշտոցն ու նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների, հայացած Աստվածաշունչն ու նրա կատարած դերը հայ ժողովրդի մշակութային կյանքում և այլն, և այլն:

Ն. Ադոնցի «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» երկն առաջին խորագնա ուսումնասիրությունն է՝ նվիրված միջնադարի հայ քերականների գործերին, որոնց հիմքում ընկած է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը: Եր - հետազոտությունը հիմնավոր ու կատարյալ տեսնելու նպատակով գիտնականը 1911-ի ամռանը մեկնել է Վենետիկ ու Վիեննա, 1912-ին եկել Էջմիածնի Մայր աթոռի մատենադարան, իսկ 1913-ին նորից մեկնել Վենետիկի Մխիթարյանների մոտ: Բանասիրական պրպտումները հանգել են այն եզրակացությանը, որ հնագույն հայ քերականների՝ Դավթի²³, Մովսեսի և Ստեփանոսի հեղինակային երկերը, որպես առանձին գործեր²⁴, չեն հասել մեզ:

Ադոնցը հայ քերականների մեկնությունները համեմատում է հույն մատենագրության մեջ եղած նմանատիպ մեկնությունների հետ: «Ձեռագիր հուշարձանների տեսություն» բաժինն ընդգրկում է Էջմիածնի, Վենետիկի ու Վիեննայի հայկական մատենադարանների ձեռագրական նյութերը, որոնցում մեկնաբանվում է Քրիստոսի ծննդից առաջ ապրած հույն նշանավոր քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատությունը:

Եր հետազոտության մեջ գիտնականը վերականգնում է որոշ կորած բնագրեր՝ ուշ շրջանի բանաբաղների աշխատությունների միջոցով: Դիոնիսիոս Թրակացու հայ մեկնիչները ներկայացնում են նաև անտիկ աշխարհի գրականագիտական գիտելիքները, որոնք մուտք էին գործել միջնադարյան հայ մատենագրություն: Նրանում առկա են հնչյունաբանությունն ու ձևաբանությունը, որոնց որոշ սահմանումներ այսօր էլ չեն կորցրել իրենց գիտականությունը: Այսօրվա դիտակետից հասկապես գործնական նշանակություն ունի «Բառք քերականին» բաժինը, որն օգտակար է գրաբարը ուսումնասիրողների համար:

1965-ին Լիսբոնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախաձեռնությամբ լույս է տեսել Ադոնցի հայ-բյուզանդական ուսումնասիրությունների ծավալուն ժողովածուն (438 էջ), որի մեջ ի մի են բերվել գիտնականի բրյուսելյան շրջանի ֆրանսերեն լեզվով գրված հոդվածները (1931–1942)²⁵: Նրանում զետեղված բոլոր հոդվածները գիտական առումով մեծարժեք են և պարունակում են հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հետաքրքրաշարժ բազմաթիվ փաստեր: Հոդվածներից մեկը վերաբերում է Աշոտ Երկաթի բյուզանդական կայսրության մայրաքաղաք

²³ Դավիթ Քերականի մեկնությունը գտել և հրատարակել է նշանավոր լեզվաբան Գ. Ջահուկյանը: Դավթի քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագրի տեքստը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, -9, էջ 241-264:

²⁴ Ն. Ադոնց, Երկեր, հ. Գ, էջ XIII:

²⁵ N. A d o n t z. Etudes Arméno-Byzantines. Lisbonne, 1965, p. 3.

այցելությանը²⁶: Հայտնի է, որ նա Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» գլխավոր պատմական դեմքերից է ու Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» վեպի կենտրոնական կերպարներից:

Ադոնցն, ըստ բյուզանդական պատմիչների, որոնց անուններն ու երկերի էջերը նշում է (Théophanes Continuëur, p. 387, Syméon le Logothète, p. 722, Georges le Moine, p. 879), պատմում է հետևյալը. «Այդ ժամանակ մայրաքաղաք հասավ շահնշահի որդի Աշոտը, մարդ, որը հռչակավոր էր իր ուժով, պատմում են, որ նա իր ձեռքը վերցրեց երկաթի ձող, այն ծռեց իր արտասովոր ուժի շնորհիվ և նրան սվեց շրջանի ձև, երկաթի բնական ամրությունը չկարողացավ դիմադրել նրա ձեռքերի հզորությանը: Կայսրուհին նրա գալու պես ընդունեց մեծ պատիվներով և այնուհետև ճանապարհեց իր երկիրը»²⁷: Բյուզանդական արքունիքում Աշոտ Երկաթի երկաթ ծռելու միջադեպը վկայակոչում է նաև Մարի Ֆելիսիտե Բրոսսեն իր «Անիի ավերակները» գրքում²⁸:

Փաստական հետաքրքիր ճշգրտումներով է հարուստ «Մամվել հայր բուլղարների թագավոր» հոդվածը: Ադոնցը գրում է, թե երկար ժամանակ սխալ կարծիք է եղել բուլղարների Մամվել թագավորի ազգային ծագման վերաբերյալ, և դրա պատճառն այն ոչ ճիշտ փաստաթղթերն են, ըստ որոնց Մամվելին դարձրել են բուլղարների թագավոր - Շիշմանի որդիներից մեկը²⁹: Ն. Ադոնցը փաստերով ապացուցում է, որ Մամվելը եղել է հայազգի, ու այդ խնդրում Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու «Պատմութիւն տիեզերական» երկի համապատասխան հատվածին պետք է անվերապահ հավատալ: Ըստ որում, Ասողիկի հաղորդածին վստահում է պատմաբան Ջորդան Իվանովը, որը 1925-ին հրատարակած իր աշխատության մեջ բուլղարների Մամվել թագավորին համարում է ծագումով հայ³⁰: Ասողիկի մոտ Մամվելի հայ լինելու փաստը հաստատվում է հետևյալ հատվածով. «Զի էին նոքա երկու եղբարք, որք Կոմսաձագքն կոչէին, անուն երիցուն Մամուլ, յազգէս Հայոց, ի գաւառէն Դերջանայ, զորս ընդ գունդս սաղարացն տարեալ էր զնոսա թագաւորն Վասիլ ի Մակեդոնիա պատերազմել ընդ Բուլղարացն, որոց ի դիպող ժամու ապստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ գնացին առ թագաւորն Բուլղարաց, որ էր կուրտ (ներքինի), և ըստ քաջութեան իւրեանց մեծացան յաչս նորա:

Եւ ապա յետ այտրիկ թագաւորն Յունաց Վասիլ ի պատերազմի կալաւ զթագաւորն Բուլղարաց զկուրտ ներքինին: Իսկ Կոմսաձագն տիրեալ ի վերայ աշխարհին Բուլղարաց՝ ընդդէմ կացին խիստ մարտիւք թագաւորին Յունաց, զոր ըստ ժամանակին ասացուք»³¹:

²⁶ Asôt Erkat ou de fer, roi d'Arménie de 915–929.– N. A d o n t z. Etudes Arméno-Byzantines, p. 265–285.

²⁷ Նույն տեղում, էջ 265:

²⁸ Տէ՛ւ Ա. Դ ո լ ն ի ս ա ն յ ա ն. Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002, էջ 82:

²⁹ Samuel l'Arménien, roi des Bulgares.– N. A d o n t z. Etudes Arméno-Byzantines, p. 380.

³⁰ Նույն տեղում, էջ 382:

³¹ Ս տ է փ ա ն ո ս Տ ա ր ո ն է ց ի Ա ս ո ղ ի կ. Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրություն, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 244-245:

1926–1927 թթ. «Հայրենիք» ամսագրում լույս է տեսնում Ադոնցի «Հին հայոց աշխարհայացքը» ծավալուն հետազոտությունը, որը վկայում է նրա բազմազգիտակությունը նաև այս բնագավառում: Գիտնականը կազմել է տարբեր դարաշրջանների աշխարհայացքային փոփոխությունների ընթացքը՝ տոտեմներից, ֆետիշներից, բազմաստվածությունից դեպի միաստվածության ներկայիս գաղափարը: Հայոց դիցաբանության խնդիրներում հայ պատմահորն անխնա ձաղկող Գրիգոր Խալաթյանցին Ադոնցը պատասխանում է հետևյալ կերպ. «Որքան և մեղավոր լինի Խորենացին, այս կետում ճշմարտության դեմ մեղանշողը նրա քննադատն է: Հույն պատմագրի վկայությունն ավելի հոգուտ Խորենացու է, քան նրա դեմ: Եթե Շամիրամի գրույցները տարածված են եղել Արևելքում, Հայաստանը ևս կարող էր հաղորդ լինել նույն գրույցներին»³²:

Օգտվելով 1917 թ. Վան կատարած ուղևորությունից՝ Ադոնցը բանագիտական աշխատանք է կատարում՝ ծանոթանալով հին Հայաստանից եկող ավանդություններին, որոնց մասին խոսում է այս աշխատության մեջ: Հետաքրքիրն այն է, որ Ադոնցը սեփական բացատրություններն է տալիս ոսկեդարի հայ պատմիչների երկերի վիպական հատվածների հերոսներին ու նրանց արարքներին: Նա մեծապես օգտագործում է և՛ իր ավեստական, և՛ հին հունական դիցաբանությունից ունեցած հարուստ գիտելիքները: Գիտնականը խոսել է նաև քրիստոնյա հայերի մեջ այնքան տարածված Սուրբ Մարգսի պաշտամունքի մասին, որին Ներսես Շնորհալին համարում է Գապաղովկիայի իշխան, վերջինս Հուլիանոս Ուրացողի կողմից հալածված փախչում է Շապուհ Երկրորդի մոտ և հենց նրա հրամանով էլ նահատակվում: Ադոնցը Սուրբ Մարգսի պաշտամունքի մեջ տեսնում է հայոց հին հավատալիքների մնացորդներ:

Տեոդալական Հայաստանի տարբեր խավերի հասարակական դերի բնորոշումը՝ հիանալի է տրված «Հայ հին շինականությունը» հետազոտության մեջ: Այս ուսումնասիրությունը պատմաբաններին կօգնի առավել ճիշտ հասկանալու հայ միջնադարի պատմիչների երկերը, նաև ընկալելու, թե ինչու 1265-ին Կիլիկյան Հայաստանի սպարապետ, իրավագետ, դիվանագետ, պատմաբան Սմբատ Գունդստաբլը միջին ֆրանսերենից թարգմանեց «Անտիոքի ասիզներ» օրենսգիրքը, որի ֆրանսերեն բնագիրը կորած է, և Արևմուտքի գիտական աշխարհին այն հայտնի է միայն Սմբատ Գունդստաբլի շատ ճշգրիտ թարգմանության շնորհիվ:

1936 թ. մարտի 29-ին Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում Ա. Չոպանյանի ջանքերով տեղի է ունենում մեծ հանդիսություն՝ նվիրված Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակին: Այդ հանդիսությանը զեկուցումով հանդես է գալիս նաև Ն. Ադոնցը. նրա զեկուցումը կոչվում էր «Հայացած Աստվածաշունչը և նրա պատմական տարողությունը» («La Bible Arménienne et sa portée historique»): Գիտնականն ասում է, որ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը թարգմանելով Աստվածաշունչը՝ կատարեցին իրենց անմահ գործը. այդ սրբազան գիրքը ազատեց հայությանն իրանական աշխարհին ձուլվելու վտանգից, խաչի

³² Ն. Ադոնց. Երկեր, հ. Ա, էջ 23:

ճառագայթներն ուղղեցին մագդեզական կրակի վրա ու Հայաստանն անդարձ տեղափոխեցին քրիստոնյա դաշտ: Նա Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ տեսնում է ազգապահպանման մեծ խորհուրդը, որն իր վրա է վերցրել դարերի ընթացքում հայոց եկեղեցին. «Ազգային եկեղեցի ունենալ կնշանակեր ունենալ սեփական մշակույթ, ինքնատիպ լեզու, գրականություն, արվեստ, մի խոսքով այն ամենը, ինչը բնորոշում է մի ազգի հոգեկան կյանքը»³³:

Այս զեկուցման մեջ առավել փայլում է գիտնականի բյուզանդագիտությունը. նա խոսում է այն հսկայական նպաստի մասին, որ քրիստոնյա հայերն ունեցել են այդ տարբեր ժողովուրդներից կազմված մեծ կայսրությունը հզորացնելու գործում: Ադոնցը վկայակոչում է այլազգի բյուզանդագետներին, որոնք նշում են, թե թագավորական ինչ փառավոր հարստություն է հիմնել Վասիլը, որը հիմնեց Մակեդոնյան հայկական գերդաստանը՝ Բյուզանդիան հասցնելով իր ռազմական ու մշակութային հզորության գագաթնակետին³⁴: Առանց հայազգի Վասիլի իսլամությունը կանցնեք Եվրոպայի վրայով՝ քարոքանդ անելով ամեն ինչ: Նա նույնությամբ մեջբերում է հայտնի բյուզանդագետ Ա. Վոկոթի կարծիքը, որը սպավորիչ ու անմոռաց պատկերավորությամբ նկարագրում է հայերի կատարածը Բյուզանդիայի կայսրության համար. «Առանց հայ գորավարների, Բյուզանդիան պիտի կործանվեր բարբարոսների հարվածների տակ: Վասնզի ժամերին հանկարծ հայտնվում էին մի Հերակլ, մի Վասիլ, մի Չմշկիկ, մի Փոկաս, որոնք այդ հոգնած քաղաքակրթությանը մի նոր թարմություն էին հաղորդում, և այնժամ կայսրությունը՝ այդ ծեր կինը, ըստ բյուզանդացի մի պատմաբանի բնութագրման, երևում էր որպես մի երիտասարդ աղջիկ՝ զարդարված ոսկով ու թանկագին քարերով»³⁵:

Այբելով Հայաստանից շատ հեռու՝ Ադոնցն ուշադիր հետևում էր հայրենիքում կատարվող իրադարձություններին, արձագանքում իրեն հետաքրքրող մշակութային ու գրական նորություններին: 1932-ին Երևանում լույս է տեսնում Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հետազոտությունը, որին ի պատասխան Ադոնցը գրում է «Խաչատուր Աբովյանի վախճանը» հոդվածը, որը լույս է տեսնում Փարիզում հրատարակվող «Վեմ» հանդեսում 1933-ին: Ըստ Բակունցի վարկածի՝ Աբովյանը հիասթափված թողել է իրեն շրջապատող կյանքը և գնացել է մասնակցելու 1848-ի Փարիզի հեղափոխությանը: Ադոնցը մերժում է Բակունցի այս վարկածը, սակայն նրա աշխատությունը համարում է նոր նյութերի նոր մեկնաբանում: Այս հոդվածում գիտնականը Աբովյանին բնութագրում է սպառիչ. «Աբովյանը այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում»³⁶:

Իր բազմաբնույթ հետաքրքրությունների ոլորտում Ադոնցն ուշադրություն է դարձրել XX դարասկզբի ավանգարդային ուղղություններին՝

³³ N. Adontz, La Bible Arménienne et sa portée historique.— Célébration solennelle du quinzième centenaire de la traduction arménienne de la Bible. Paris, 1938, p. 50.

³⁴ Նույն տեղում, էջ 57-58:

³⁵ Նույն տեղում, էջ 59-60:

³⁶ Ն. Ադոնց. Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 536:

մասնավորապես սիմվոլիզմին: Այս անդրադարձը նա անվանել է «Գրական նշմարներ, Դեկադանս և սիմբոլիզմ» ու հրատարակել է իր խմբագրած «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսում 1903-ին: Հռոմի սկզբում նա հիշատակում է, որ ռուս գրականության շատ անվանի դեմքեր, որոնց թվում և Լև Տոլստոյը, գրական այդ նոր շարժմանը դեմ արտահայտվեցին: Լև Տոլստոյը «Ի՞նչ է արվեստը» տրակտատի վերջաբանում - խոստովանում է, որ իր հետազոտության վրա աշխատել է 15 տարի³⁷: Հանճարեղ ռուս գրողը կտրուկ մերժում է ֆրանսիական սիմվոլիստներին ու նրանց հետևորդներին: Նա խիստ քննադատում է բանաստեղծներ Շառլ Բողլերին ու Պոլ Վերլենին, չի ընդունում Մետերլինկի ու Մալարմեի արձակը, խստորեն մերժում է նշանավոր կոմպոզիտորներ Ֆ. Լիստի, Ռ. Վագների, Հ. Բերլիոզի, Յ. Բրամսի, Ռիխարդ Շտրաուսի գործերը, չի ընկալում ֆրանսիացի իմպրեսիոնիստ նկարիչների արվեստը: Ն. Ադոնցը համաձայն չէ այսօրինակ գնահատականներին. նա կողմ է արվեստի ու գրականության մեջ եղած որոնումներին. «Նորագույն հոսանքների և տեսությունների հեղինակները ոչ թե սկարությունից, գրական շնորհքի պակասությունից խոտորեցին տիրող գրական ուղղություններից, այլ իրենց ներքին պահանջներին գոհացում տալու համար՝ Բողլերի, Վերլենի կամ Մալարմեի խոշոր տաղանդը, գեղասիրական ձիրքերը ամեն տարակուսից վեր են»³⁸:

Պատմաբան ու մեծ հայրենասեր Ն. Ադոնցը հայ դատի իմաստուն պաշտպաններից էր: 1915 թ. ազգակործան եղեռնից հետո նա, ինչպես ասվեց, հնագիտական նպատակներով այցելել է Վան, Էրզրում, Մուշ, տեսել ավերված, կողոպտված ու սրի քաշված իր պաշտելի հայրենիքը: Հայկական հարցի վերաբերյալ գրած նրա հոդվածներն աչքի են ընկնում քաղաքական հասունությամբ, իրավաբանական խնդիրների քաջիմացությամբ, համոզիչ ու անզիջում, իրավացի ու հավերժական պահանջատիրությամբ՝ ուղղված հայերի ցեղասպանությունն իրագործած Թուրքիայի պետությանը: Նրա հոդվածները գրված են անզլերենով ու հիացմունք են պատճառում հմուտ դատապաշտպանին հատուկ փաստերի վրա հիմնված եզրահանգումներով: Հոդվածների խորագրերն են՝ «Հայկական հարցը Սևրում», «Հայկական հարցի պատմական հիմքը և Թուրքիայի անկումը»: Պատմաբանը, որը հայ ժողովրդի դարավոր ընթացքի գիտակն էր, նշում է, թե որքան մեծ վնաս հասցրեց Հայկական հարցի լուծմանը Ռուսաստանում սկսված հեղափոխությունը, որին էլ գումարվեց տխրահռչակ Ադրբեջանի հանրապետության հռչակումը ու նրա բնակիչ թաթարների արյունալի հարձակումները՝ հայերի վրա: Նա խիստ քննադատում է եվրոպական տերություններին, որոնք Սևրի պայմանագրի մեջ վերջնականորեն չամրագրեցին Հայաստանի օրինական սահմանները, որոնք, Լինչի պատկերավոր խոսքի համաձայն, «լեռնային տանիք է, որ իջնում է դեպի Սև ծով

³⁷ Л. Н. Толстой. Собрание сочинений в 12 томах, т. 5. М., 1983, с. 271.

³⁸ Ն. Ադոնց. Երկեր, հ. Բ, էջ 570:

հյուսիսում, դեպ ի Տիգրիսի երկու վտակների հովիտները հարավում և հատվում է Եփրատի ջրերով արևմուտքում»³⁹:

Ադոնցը նկատում է, որ Թուրքիայի ռազմական փառքը, դրամական հարստությունը, արտադրողական ուժերը չէին լինի, եթե չլիներ տեղի քրիստոնյա ազգաբնակչությունը: Օսմանյան սուլթանները Հայաստանում կալվածքները շնորհում էին քրդական ցեղապետերին, ու սուլթանի կամքով մի ծաղկուն գյուղատնտեսական երկիր իջավ, այն էլ - երկար ժամանակով, նախնական վաչկատուն ցեղերի հովվական կացությամբ: Նա քննադատում է եվրոպական տերություններին, որոնք անտարբեր են հայերի դատի նկատմամբ, ավելին, բացահայտորեն պաշտպանում են Թուրքիային՝ Անգլիայի գլխավորությամբ, իսկ Ռուսաստանն էլ է անտարբեր, այն դեպքում, երբ հայերը տուժեցին նաև ռուսական կողմնորոշման պատճառով: Եղեռնից հետո Հայաստանի օրհասական դրությունը ներկայացնելով՝ պատմաբանը հավատում է իր ազգի հարատևությանը. Հայաստանը «վիրավոր է ու արյունաքամ, բայց սպանված չէ»⁴⁰: Հայ դատը պաշտպանող Ն. Ադոնցի հողվածները այսօր էլ շարունակում են մնալ արդիական: Իր քաղաքական իդեալի՝ Տիգրան Մեծի մասին Նիկողայոս Ադոնցը գրում է. «Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որ պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»⁴¹: Հայագիտությունը «Մեծ» տիտղոսին է արժանացրել նաև հենց իրեն՝ Նիկողայոս Ադոնցին՝ դրանով արտահայտելով իր հիացմունքն ու երախտագիտությունը նրա անձի ու գործի նկատմամբ:

ПРОСЛАВЛЕННЫЙ ИСТОРИК, ВИЗАНТИНИСТ И
АРМЕНОВЕД НИКОЛАЙ АДОНЦ
(К 140-летию со дня рождения)

АЭЛИТА ДОЛУХАНЫН

Резюме

Николай Адонц (1871–1942) оставил богатое научное наследие, которое навсегда останется в сокровищнице исторических исследований. Крупный арменовед провел двадцать два года своей жизни в эмиграции, в Лондоне, Париже и Брюсселе. Еще в годы работы в Петербургском университете, он занимался не только научными исследованиями, но и патриотической деятельностью. Н. Адонц оставил три важнейших произведения: «Армения в эпоху Юстиниана» (1908), «Дионисий Фракийский и армянские толкователи» (1915) и «История Армении», т. I (1946, посмертно). Классический ученый, он владел несколькими древними и новыми языками, писал на армянском, русском, французском

³⁹ Ն. Ադոնց. Հայկական հարցի լուծման շուրջ, անգլերենից թարգմանեց և հրատարակության պատրաստեց Վ. Ա. Դիլոյան, Երևան, 1989, էջ 21-22:

⁴⁰ Նույն տեղում, էջ 111:

⁴¹ Ն. Ադոնց. Երկեր, Ա, էջ 164:

и английском языках. Исследования Адонца по истории Византии принесли ему всемирную известность. Он был лингвистом, филологом, историком, источниковедом и великим энциклопедистом. Он писал статьи на английском языке об армянском вопросе. Труды Николая Адонца переведены на армянский язык и изданы в пяти томах при содействии Фонда Галуста Гюльбенкяна. Труды великого ученого могут служить исходной точкой для будущих исторических исследований.

FAMOUS HISTORIAN, BYZANTINIST AND
ARMENOLOGIST NICOLAS ADONTZ

(To the 140th birth anniversary)

AELITA DOLUKHANYAN

S u m m a r y

Nicolas Adontz (1871–1942) bequeathed us such a huge scientific heritage that it will always remain in the treasury of historical and Byzantine studies as a first rank value. The great Armenologist spent twenty-two years of his life as an emigrant in London, Paris and Brussels. Since the years when he worked at St. Petersburg University, he was not only engaged in scientific research, but also in patriotic activities. Adontz wrote three most important works: “*Armenia at the Time of Justinian*” (1908), “*Dionysius Thrax and Armenian Interpreters*” (1915) and “*History of Armenia*”, vol. I (1946, posthumous publication). The classical scholar mastered many old and new languages and wrote in Armenian, Russian, French and English. His works dedicated to Byzantine studies brought him international fame. Adontz was a linguist, philologist, folklorist, historian, specialist in sources, having encyclopedic knowledge in many fields. He wrote articles devoted to the Armenian Question in English which are topical even now. Works by N. Adontz are all translated into Armenian and published in five volumes with the sponsorship of Calouste Gulbenkian Foundation. Works by this great scholar have the importance of a starting point for future historical studies.